հաշվի առնելով Հայցվորի կողմից պետական տուրքը նախապես վճարված լինելու փաստը, դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա՝ ղեկավարվելով քաղաքացիական դատավարության 168-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Պատասխանողի միջնորդությունը բավարարել. Մանսերգո ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել հայցային վաղեմության ժամկետի կիրառման հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am